ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 2

Գլուխ 1 . Փոխներգործուն մեթոդների դերը ուսուցման արդյունավետության բարձրացման գործում---------- 4

Գլուխ 1.1Փոխներգործուն մեթոդները որպես միջառարկայական կապերի ստեղծման արդյունավետ հնար

1.2 Փոխներգործուն հնարների կիրառման հնարավորությունները ԽԻԿ համակարգով մայրենիի դասերի ընթացքում---------- 10

1.3 Ուսումնասիրման արդյունքների վերլուծություն և ընդհանրացում- 17

Եզրակացություն---------- 19

Գրականության ցանկ---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, սովորողների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում են ինքնուրույն ճանաչողական գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և առարկայական ծրագրերի ինտեգրման եղանակով:

Մեթոդների ընտրությունը և կիրառությունը ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով: Ուսուցման գործընթացի կազմակերպումը պետք է իր մեջ ներառի ուսուցման բազմազան մեթոդներ:

Մենք եկել ենք այն համոզման որ համագործակցության ճանապարհով ձեռք բերված գիտելիքները ավելի կայուն են ավելի կիրառելի:Իսկ այս խնդիրը ավելի շատ լուծվում է փոխներգործուն մեթոդների միջոցով,որոնք հիմնականում ենթադրում են համագործակցային ուսուցում:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:

Փոխներգործուն մեթոդների միջոցով ապահովվում են ուսուցման այնպիսի պայմաններ որենց առկայությամբ յուրաքանչյուր սովորող յուրացնում է ոչ միայն ուսումնական նյութը այլ ակտիվորեն փոխգործակցում է իր համադասարանցիների հետ:

Փոխներգործուն են այն մեթոդները, որոնց կիրառման ժամանակ սովորողը ուսուցանող համակարգում հանդես է գալիս մշտապես փոփոխվող սուբյեկտիվ

օբյեկտիվ հարաբերություններում, պարբերաբար դառնալով նրա ինքնավար ակտիվ տարրը:

Ժամանակակից պահանջներից է նաև ուսուցման գործընթացը իրական կյանքին մոտեցնելը: Այլևս բավարար չէ ուսուցումը որպես կյանքի նախապատրաստություն դիտարկելը: ՈՒսուցումը ինքը պիտի հիմնված լինի կյանքի իրավիճակների վրա: Հենց այդպիսին են ուսուցման փոխներգործուն մեթոդները: Սրանով այդ մեթոդները օգնում են ամբողջ կյանքի համար անհրաժեշտ հմտությունների, կարողությունների զարգացմանը:

Հետազոտության նպատակը՝ ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների ազդեցությունը տարրական դասարանների աշակերտների ուսուցման, արդյունավետության բարձրացման վրա:

Հետազոտության *խնդիրներն են.*

1. Թեմայի շրջանակներում առկա գրականության ուսումնասիրություն:
2. Բացահայտել փոխներգործուն մեթոդների դերը ուսուցման գործընթացում:
3. Մշակել փոխներգործուն մեթոդների կիրառման արդյունավետությանը նպաստող մեթոդական ցուցումներ:

1.1Փոխներգործուն մեթոդները որպես միջառարկայական կապերի ստեղծման արդյունավետ հնար

Ուսուցման գործընթացում յուրաքանչյուր նորույթ դժվարությամբ է իր համար ճանապարհ հարթում ամենից առաջ արդեն ամրացած սովորույթի հաղթահարման դժվարության, որը բնական երևույթ է, կամ նորի արմատավորման, ընդհանրացման, անսովորության պատճառով, որը նույնպես բնական է: Այս առումով միջառարկայական կապերի օգտագործման շուրջ վաղուց սկսված տեսական խոսակցության, դատողությունների, առաջարկների ու հիմնավորումների ու այդ ուղղությամբ արված գործնական քայլերի, իրական ձեռքբերումների միջև եղած որոշակի տարբերությունների առկայությունը ևս միանգամայն բնական երևույթ է, և դրանում զարմանալի ոչինչ չկա:

Դասի գործընթացում կամ նյութի ուսումնասիրության ընթացքում միջառարկայական կապերը կարող են օգտագործվել երկու տարբեր պահերի՝ նայած անհրաժեշտության և նյութի բնույթին: Այսպես, ուսումնասիրվող նյութի ընդհանուր թեմայի շուրջ անցկացվող նախապատրաստական զրույցի ընթացքում ուսուցիչը կարող է օգտագործել ուսումնական այլ առարկաների ու գիտությունների տվյալները թեմայի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում տալու, ավելի ընդհանրացված հասկացություն ձևավորելու համար, որպեսզի դրանով իսկ հող ստեղծի բուն նյութի յուրացման համար:

Հատկապես նյութի մշակման ժամանակ, երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից, կարելի է ու պետք է համանման փաստեր բերել նաև արդեն անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ ու զուգահեռներ անցկացնել՝ միայն ավելի պարզելու գաղափարներ ու հասկացություններն ավելի մատչելի դարձնելու համար:

Այսպիսի օժանդակ կամ լրացուցիչ փաստարկումներ աշակերտներից պետք է պահանջել նաև նրանց պատասխանելու ժամանակ, որպեսզի սովորեն զուգահեռներ անցկացնել, փաստարկել ու հիմնավորել իրենց ասածը, որը շատ կարևոր է ոչ միայն նյութը խորը յուրացնելու, այլև ինքնուրույն եզրակացությունների հանգելու կարողության մշակելու տեսակետից:

Դպրոցական ուսուցումը կառուցվում է այնպես, որ բառատրամաբանական մտածողությունը նկատելիորեն զարգանա: Եթե դպրոցական առաջին տարիներին երեխաները շատ աշխատում են ակնառու պատկերներով, ապա հաջորդ դասարաններում նրանց ծավալը կրճատվում է:

Մայրենի լեզուն տարրական դասարաններում իր մեջ ներառում կամ ընդհանրացնում է աշխարհաճանաչողական գիտելիքների ամբողջ համակարգը: Այս հանգամանքը ևս ուսուցիչը անպայման պետք է նկատի ունենա և իրականացնի իր աշխատանքի ընթացքում՝ օգտագործելով բոլոր այն աշխարհաճանաչողական գիտելիքների իր իմացական տվյալները, որոնք անհրաժեշտ կլինեն նյութի ուսումնասիրման ընթացքում: :[1,էջ 49]

Ուսումնասիրվող նյութերի միջև փոխադարձ կապերի ապահովման ժամանակ պահանջիտակ ամենից առաջ պետք է հասկանալ բազմակողմանի կապերի ստեղծումը՝ սկսած արտաքին երևութականից մինչև տրամաբանական, առարկայական կամ մասնագիտական բովանդակության, թեմատիկ և այլ կապերը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ նյութը բազմակողմանիորեն օգտագործել, նրանից առավելագույն արդյունք ստանալ: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես՝ տեխնոլոգիա, մաթեմատիկա, կերպարվեստ, երաժշտություն առարկաների միջև:

Ուսուցման գործընթացում կարևոր տեղ պետք է հատկացնել միջառարկայական կապերին, որոնք ուսուցման հաջողության անհրաժեշտ պայմաններից են:

Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները,

այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»:

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և՛ ժամանակի, և՛ գործադրության տեղի ու ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, օրգանապես չի ձուլվի ընդհանուր պրոցեսի հետ, չի դառնա նրա կայունության բաղադրիչը: Այդ տեսակետից միջառարկայական կապերի օգտագործումը ևս բացառություն չի կազմում, այն ևս իր որոշակի տեղը պետք է ունենա ուսումնական աշխատանքի ընդհանուր համակարգում և նույնիսկ յուրաքանչյուր կոնկրետ նյութի ուսումնասիրության գործընթացում: :[17,էջ 49]

Միջառարկայական կապերի օգտագործումը ինքնանպատակ չէ և ոչ էլ կարող է նյութի ուսումնասիրության ընթացքում հիմնական կամ տիրապետող գործոն դառնալ: Այն ըստ էության, միշտ օժանդակ միջոց է և պետք է մնա այդ մակարդակի վրա, օգնի հիմնական նյութի ճիշտ, խորն ու բազմակողմանի յուրացմանը:[16 ,էջ 115]

Միջառարկայական նյութի օգտագործումն ավելի շատ աշակերտների կողմից է կատարվում, որը բարձրացնում է դրա արդյունավետությունը և նպատակայնությունը: Հնարավոր չէ հատուկ մեթոդական հանձնարարականներ մշակել միջառարկայական կապերի դերն ու տեղի օգտագործման վերաբերյալ, որովհետև ըստ էության այն հիմնական պայմանավորված է ուսումնասիրվող նյութի նրա ստեղծած հնարավորություններով և անշուշտ, ուսուցչի ունեցած տարաբնույթ գիտելիքների ու տեղեկությունների ընդհանուրպաշարով: Մարդը կարող է օգտագործել այն, ինչը ինքը գիտի:

Շատերն են գրում և խոսում միջառարկայական կապերի օգտագործման առավելությունների մասին, տեսական դատողություններ են անում և գործնական առաջարկություններ մշակում, սակայն քաջություն պետք է ունենալ խոստովանելու, որ այս բնագավառում շատ մեծ ձեռքբերումներ՝ առանձնապես տարրական ուսուցման օղակում, դեռևս չկան և առանձին ուսումնական առարկաների գծով կոնկրետ մեթոդական հանձնարարություններ դեռևս մշակված չեն: Հետևաբար՝ մայրենի լեզվի դասերին միջառարկայական կապերի օգտագործման առումով այսպիսի որոշակի հանձնարարականների մշակումը, անկասկած կնպաստի

գործնական աշխատանքում դրա նոր ձևերի ու եղանակների, դրա նոր տարատեսակների մշակման ու կատարելագործման հնարավորությամբ:

Միջառարկայական կապերի օգտագործման կամ տարրական դասարանների մայրենիի դասերին դրանց դրսևորման ձևերի ու եղանակների մասին, ամենից առաջ ու ամենից շատ պետք է ընդունել որպես մեթոդական ընդունելի կամ հանձնարարելի, ավելի հավանական ու ավելի օպտիմալ ձև, քան մեթոդական դոգմա:[16,էջ 115]

Միջառարկայական կապերի օգտագործման կարևոր եղանակներից է, մայրենիի դասերին, ձեռքբերված գիտելիքների ու կարողությունների փոխանցումը, որը պետք է լինի ուսուցման գործընթացում: Գիտելիքների ու կարողությունների այդպիսի փոխանցումն ու օգտագործումը ևս պետք է դիտել որպես միջառարկայական կապերի կիրառության կարևոր ձևերից մեկը և վստահորեն գործադրել տարրական դասարանների մայրենի լեզվի դասերին՝ հավատացած լինելով, որ այն մեծ օգուտ կարող է տալ ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական տեսակետից:

Միջառարկայական կապերի օգտագործումը, ըստ էության շատ բարդ աշխատանք է ուսուցչից ու աշակերտներից մեծ վարպետություն, հմտություն ու գործիմացություն է պահանջում: Միջառարկայական կապերի օգտագործումը հետևանք է, այն ըստ էության այդ ուղղությամբ տարվող բազմաթիվ ու բազմապիսի աշխատանքների վերջնական, բարձրագույն արդյունքը պետք է լինի: Փոխադարձ կապերի ապահովման ժամանակպահանջի տակ ամենից առաջ պետք է հասկանալ բազմակողմանի կապերի ստեղծումը՝ սկսած արտաքին երևութականից մինչև տրամաբանական, առարկայական կամ մասնագիտական բովանդակության, թեմատիկ և այլ կապերը, որոնք հնարավորություն են տալիս տվյալ նյութը բազմակողմանիորեն օգտագործել, նրանից առավելագույն արդյունք ստանալ: Միջառարկայական կապեր գոյություն ունեն հատկապես՝ «Տեխնոլոգիա», «Մաթեմատիկա», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների միջև:



Այդ առարկաներից յուրաքանչյուրի ուսուցման ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ունակությունները և հմտությունները լայնորեն կիրառվում են մյուս առարկաների ուսուցման գործընթացում:

Դպրոցի տարրական դասարաններում միշտ էլ մեթոդական հիմնախնդիր է եղել միջառարկայական կապերի կիրառումը: Այն շատ դեպքերում կրել է մեխանիկական բնույթ:

Սակայն այլ են նորագույն մանկավարժական մոտեցումների ու ծրագրերի պահանջները: Տարրական դպրոցում ընթերցանության դասերի ընթացքում պահանջվում է նյութից բխող ինտեգրում նույն դասարաններում ուսումնասիրվող եռադրումների միջև՝ բացատրական ընթերցանություն-մայրենի-կերպարվեստ, մայրենի-աշխատանքի ուսուցում- մաթեմատիկա և այլն: Այս ծրագրի իրականացումը պահանջում է և՛ գիտելիքներ, և՛ տեղեկատվություն, և՛ ստեղծագործական միտք ու վարպետություն: Ուշագրավ է ինտեգրումը ընթերցանության և քերականության միջև: Տարրական դասարանների մայրենիի դասագրքերը կազմված են հենց ինտեգրման սկզբունքով, որի պահանջն է՝ իրականացնել հայոց լեզվի գործնական ուսուցում՝ ընթերցանության նյութերի միջոցով:

Ինտեգրված դասի ընթացքում աշակերտների որոնողական և համագործակցային աշխատանքային ձևերն ավելի ակտիվ բնույթ են կրում: Ինտեգրված առարկաների և դրանց փաստացի նյութի շուրջ կատարվող աշխատանքները բխում են բնագրի բովանդակությունից, թեմայից, լեզվից: Հասկանալի է, որ տարրական դասարանների աշակերտները լիովին ի վիճակի չեն լինի գտնելու հարցաշարերում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները: Այս դեպքում համագործակցված աշխատանքը կրելու է աշակերտ-ծնող, աշակերտ-

տեղեկատվականգիրք, աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ զույգերով կամ խմբային կիրառության ձևը:

Միջառարկայական կապերի ինտեգրումը մայրենի լեզվի ուսուցչին հնարավորություն է ընձեռում եռադրումների միջոցով լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ ես և շրջակայից, երաժշտությունից և կերպարվեստից:



Ուսուցման այս ռազմավարությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ ճանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինքնուրույն աշխատանքի, որը կարևոր ուղենիշ է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինքնուրույն ուսուցման, կատարելագործման ու բազնակողմանի զարգացման առումով:

1.2 Փոխներգործուն հնարների կիրառման հնարավորությունները ԽԻԿ համակարգով մայրենիի դասերի ընթացքում

Տարրական դասարաններում՝ մայրենի լեզվի դասաժամերին, գիտելիքների ուսումնասիրությունը կարելի է իրականացնել փոխներգործուն մեթոդական հնարների կիրառման ճանապարհով, որը հնարավորություն կտա աշակերտներին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և ակտիվ գործունեության ընթացքում յուրացնել գիտելիքների այն ծավալը, որը նախատեսված է իրենց համար՝ հիմք ընդունելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները։

Հետազոտության ընթացքում՝ մայրենիի դասաժամերին, դիտումներ անցկացնելով տարբեր դասարաններում, ինչպես նաև զրուցելով տարբեր դասվարների հետ, փորձեցինք պարզել, թե տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին որ հնարների ու մեթոդների կիրառմամբ են իրականացվում լեզվական գիտելիքների ուսումնասիրությունը։ Դիտումների արդյունքում համոզվեցինք, որ լեզվական գիտելիքների ուսումնասիրությունը իրականացվում է օրվա դասի թեմայի հետ կապելով՝ բնագրի շուրջ աշխատանք կատարելու ժամանակ։

Հետազոտական աշխատանքի նպատակն էր. պարզել, թե տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին տարրական գիտելիքներն ուսումնասիրելիս ինչպիսի փոխներգործուն հնարներ են կիրառվում, հասկանալ, թե՛ որքանով է արդյունավետ փոխներգործուն հնարների կիրառությունը լեզվական գիտելիքների ուսումնասիրության ժամանակ, ինչպես նաև անձնական օրինակով (մայրենիի դասեր պլանավորելով և անցկացնելով) ստուգել, թե՛ որքանով է արդյունավետ փոխներգործուն հնարների կիրառումը։

Հետազոտության ընթացքում մեր կողմից պլանավորած և դիտարկված մայրենիի դասաժամերին, լեզվական նախագիտելիքների ուսումնասիրման

նպատակով փորձեցինք կիրառել մի քանի մեթոդական հնարներ, ուսումնական խաղեր ։

Փոխներգործուն մեթոդական հնարերի թվին կարող ենք դասել նաև **ուսումնական խաղերը,** որոնք բազմիցս կիրառվում են մայրենի լեզվի դասաժամերին՝ այս կամ այն կրթական խնդիրների լուծման նպատակով։ Կան մի շարք ուսումնական խաղեր, որոնք նախատեսված են հենց լեզվական գիտելիքների ուսումնասիրության համար։ Դրանցից են. «Ես ասեմ, դու լրացրո՛ւ», «Գտի՛ր քո խումբը», «Զբաղեցրու քո աթոռը», «Ինչպիսի՞ն է առարկան», «Ո՞ր ծառից են ընկել տերևները», «Բերքահավաք», «Գտի՛ր վերջավորությունը» և այլն[1]։

Ներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնք կիրառել ենք դասերի ընթացքում։

Երկրորդ դասարանում «**Երեք աղջիկների հեքիաթը**» **(հանելուկ, դարձվածք)** հեքիաթի ուսումնասիրման ժամանակ աշակերտները նաև ծանոթանում են առարկա ցույց տվող բառերին և դրանց առաջադրվող հարցերին, որոնց որոշ չափով արդեն ծանոթ են առաջին դասարանից։

Առարկա ցույց տվող բառերի ուսումնասիրման ժամանակ դասի *իմաստավորման փուլում* կիրառեցինք «**Գտի՛ր քո խումբը**» ուսումնական խաղը։ Աշակերտներին բաժանվեցին առարկա ցույց տվող բառերի նկարներ, նրանք լսելով «Գտի՛ր քո խումբը» հրահանգը, պետք է զբաղեցնեին գրատախտակի մոտ նախատեսված իրենց ճիշտ տեղը՝ ո՞վ (ովքե՞ր) / ի՞նչ (ինչե՞ր)։ Խաղի ավարտին աշակերտներին բացատրվեց, որ ո՞վ(ովքե՞ր), ի՞նչ (ինչե՞ր) հարցերին պատասխանող բառերը առարկա ցույց տվող բառերն են, և աշակերտները, վերլուծելով խաղի բովանդակությունը, եկան այն եզրահանգման, որ ո՞վ (ովքե՞ր) հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս *անձ*, իսկ ի՞նչ (ինչե՞ր) հարցերին պատասխանող բառերը՝ *իր*։

Այս խաղի կիրառումը աշակերտներին հնարավորություն ընձեռեց իրենց համար հետաքրքիր, ակտիվ գործունեության ընթացքում ձեռք բերել նոր գիտելիքներ և ունակություններ։ Խաղին ակտիվությամբ մասնակցում էին դասարանի բոլոր աշակերտները։

[1] Ա. Բալայան, 200 խաղ, Եր.։ «Զանգակ» հրատ., 2017, էջ 23-29։

«**Երեք աղջիկների հեքիաթը**» **(խնդուկ-խնդմնդուկ)** հեքիաթի 6-րդ հատվածի ուսումնասիրության ժամանակ դասի կարևորագույն խնդրիներից մեկը **հատուկ և հասարակ անուններին** ծանոթացումն էր, ինչպես նաև դրանց ճիշտ գրություն ուսումնասիրումը: Հատուկ և հասարակ անուններին աշակերտները ծանոթ են դեռևս գրաճանաչության շրջանում՝ «Այբբենարանի» նյութերը ընթերցելիս:

Հատուկ և հասարակ անունների ուսումնասիրումը երկրորդ դասարանում կատարեցինք հետևյալ եղանակով. «**Մեծատառ-փոքրատառ**» ուսումնական խաղը կիրառեցինք *դասի իմաստավորման փուլում*, աշակերտներին բաժանվեցին քարտեր, որոնց վրա գրված էին հատուկ և հասարակ անուններ, նրանք իրենց մոտ գտնվող քարտերը պետք է դասավորեին կամ փակցնեին գրատախտակին գծված աղյուսակի համապատասխան սյունակում (մարդիկ, կենդանիներ, ծաղիկներ, քաղաքներ, լճեր, լեռներ, մրգեր):

Առաջադրանքը կատարելուց հետո աշակերտներին առաջարկվեց համեմատել սյունակներում գրված բառերի գրությունները և գտնել դրանց տարբերությունը. աշակերտները եկան այն եզրահանգման, որ *մարդկանց, լեռներին, լճերին, քաղաքներին տրվող առանձին անունները գրվում են մեծատառով*, իսկ *ծաղիկների, կենդանիների, մրգերի անունները գրվում են փոքրատառով*: Այնուհետև նրանց բացատրվում է, որ **միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը հասարակ անուն է և կոչվում է** *ընդհանրացնող անուն,* իսկ **միևնույն տեսակի առարկաներից մեկին տրվող առանձին անունը կոչվում է** *հատուկ անուն*[2]:

«Երեք հարուստ» ստեղծագործության ուսումնասիրման ժամանակ՝ *անձ* և *իր* ցույց տվող գոյականների մասին աշակերտների գիտելիքներն ամրապնդելու նպատակով կիրառեցինք **«Խմբային հետազոտություն»** փոխներգործուն մեթոդը: **«Խմբային հետազոտություն»** մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչը ներկայացնում է թեման և ցույց տալիս նյութի նախնական հավաքածուն: Աշակերտները քննում են նյութը բարձրացնում ուսումնասիրության ենթակա հարցերը և թեման բաժանում են ենթաթեմաների[3]:

---

[2] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Եր., 2015, էջ 232:
[3] Մ.Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան: Փուլային ուսուցման եղանակ: Եր., 2014, էջ 104

Դասի **իմաստավորման փուլում** դասարանը բաժանեցինք 3 հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբին տվեցինք մեկական քարտ, որում առանձնացված էր բնագրից մի հատված: Սովորողները պետք է ուսումնասիրեին բնագիրը և առանձնացնեին գոյականները՝ դրանք դասավորելով **«**Տ-աձև աղյուսակ**»**-ի համապատասխան սյունակներում: Տրված աշխատանքն ավարտելուց հետո, աշակերտերին առաջարկվեց շարունակել իրենց ուսումնասիրությունը և պարզել, թե տրված բնագրում ավելի շատ գոյականների ո՞ր խումբն է շատ կիրառվել: Աշխատանքների ավարտին յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր կատարած աշխատանքը, ապա քննարկեցին և համեմատեցին միմյանց կատարած հետազոտության արդյունքները:

«Խմբային հետազոտության» մեթոդը մեր կարծիքով շատ արդյունավետ է կիրառել ուսումնական զանազան խնդիրներ լուծելու նպատակով, քանի որ այն ուսուցման գործընթացը դարձնում է ավելի հետաքրքիր և սովորողները միասին աշխատելով՝ կարողանում են հասնել որոշակի արդյունքների:

Տարրական դասարաններում ամենից հաճախակի կիրառվում է նաև «**Տ-աձև աղյուսակը**»: Այն օգտագործվում է միևնույն հասկացության խնդրի երկու կողմերը համեմատելու համար, այն շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխաններ կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների կիրառման համար[4]:

«Տ-աձև աղյուսակը» կարելի է կիրառել ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրության ժամանակ:

Այսպես, «Տ-աձև աղյուսակը» կիրառեցինք երրորդ դասարանում «***Խոզն ու ագռավը***» ստեղծագործության ուսումնասիրման ժամանակ: Դասի նպատակներից մեկը *գոյականի եզակի և հոգնակի թվի* ուսումնասիրությունն էր: Լեզվական նյութի ուսումնասիրությունը կատարեցինք հետևյալ եղանակով. *դասի իմաստավորման փուլում* աշակերտներին բաժանեցինք քարտեր, որոնց վրա պատկերված էին եզակի և հոգնակի թվով գոյականներ և հանձնարարեցինք դրանք փակցնել գրատախտակին գծված աղյուսակի համապատասխան սյունակում:

[4] Մ.Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան: Փուլային ուսուցման եղանակ: Եր., 2014, էջ 69:

Նախապատրաստական փուլում նախ հարցերի օգնությամբ քննարկեցինք առաջադրանքը և կատարման կարգը։ Առաջադրանքները կատարելով՝ աշակերտները վերհիշում են առարկա ցույց տվող բառերը, ինչպես նաև սովորում են գոյականի թիվը, դրանց անվանումները՝ եզակի և հոգնակի, գաղափար է տրվում նաև հոգնակի թվի վերջավորությունների (-եր, -ներ) մասին։

Առաջադրանքը կատարելուց հետո սովորողները գալիս են հետևյալ եզրահանգումներին.

- գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի,
- գոյականի եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի առարկաներ։

Մեթոդական հնարի ընտրությունը այնքանով էր արդյունավետ լեզվական նյութի ուսումնասիման ընթացքում, որ աշակերտները եզակի և հոգնակի գոյականները գրելով համապատասխան սյունակներում, կարողացան ակնառու տեսնել դրանք նմանություններն ու տարբերությունները, համեմատել դրանք, ինչպես նաև վերլուծել հոգնակի գոյականների վերջավորությունները և դրանց տարբերությունները։

Երկրորդ դասարանում **«Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ»** ստեղծագործության ուսուցման ժամանակ սովորողներն ամրապնդում են նաև իրենց ունեցած գիտելիքները *հատուկ և հասարակ գոյականների* մասին։ Այդ լեզվական նյութի ուսումնասիրման նպատակով դասի *իմաստավորման փուլում* կիրառեցինք **«Խճանկար» մեթոդը**։

Սովորողները բաժանվեցին 2 խմբի, յուրաքանչյուր խմբում՝ 5 մասնակից։ Աշակերտներից ամեն մեկին բաժանեցինք տարբեր գույների քարտեր, որոնց վրա գրված էին հատուկ և հասարակ անունների վերաբերյալ նյութ (տեղեկություն) ու փոքրիկ առաջադրանք։ Սկզբում աշակերտներից յուրաքանչյուրը ծանոթացավ իր քարտի բովանդակությանը, այնուհետև սովորողները կարդացին ու կատարեցին առաջադրանքները, որից հետո նույն քարտեր ունեցող աշակերտները միացան և միասին քննարկեցին իրենց քարտերի բովանդակությունը և միասին համեմատեցին կատարած առաջադրանքները։ Այնուհետև խմբերը վերամիավորվեցին,

յուրաքանչյուր աշակերտ իր քարտի բովանդակությունը սովորեցրեց խմբի մյուս անդամներին:

Խմբային աշխատանքը ավարտելուց հետո բանավոր քննարկում իրականացրինք, լսեցինք յուրաքանչյուր խմբի պատասխանը և աշակերտների հետ միասին լրացրինք «**Հասկացությունների աղյուսակը**»:

Դասի *իմաստավորման փուլում* **«Խճանկար» մեթոդի** կիրառությունը մեզ հնարավորություն ընձեռեց աշակերտներին ներգրավել ուսումնական գործունեության մեջ. սովորողները հանդես եկան ինչպես սովորողի, այնպես էլ սովորեցնողի դերում:

«Դերային խաղ»: Դերային խաղը հիմնվում է իրավիճակում առկա հիմնախնդրի լուծման ժամանակ մասնակիցների ակտիվ փոխազդեցության վրա: Այս մեթոդի կիրառմամբ պարապմունքները կրում են ակտիվ և հետաքրքրաշարժ բնույթ:

«Դերային խաղը» կիրառեցինք ***«Մեղուն ու հավը»*** ավանդության ուսուցման ժամանակ դասի *իմաստավորման փուլում*:

Աշակերտները զույգերով կամ անհատական դերայի խաղի օգնությամբ ցույց տվեցին գործողություն ցույց տվող բառեր, իսկ մյուսները գուշակեցին դրանք, որից հետո գործողություն ցույց տվող բառերը և այդ գործողության հետ կապված գոյականները գրվեցին գրատախտակին գծված «*T-աձև աղյուսակի*» համապատասխան սյունակում:

«Փոխներգործուն գրառումների համակարգ (ՓԳՀ)», «Խաթարված հերթականություն»

Երրորդ դասարանում «***Մութի և լույսի ծնունդը*** » ստեղծագործության ուսուցման ժամանակ աշակերտները ուսումնասիրում են նաև օժանդակ բայերը:

Լեզվական նյութի ուսումնասիրության ժամանակ *դասի իմաստավորման փուլում* կիրառեցինք «***Փոխներգործուն գրառումների համակարգ***» մեթոդը, որը բնագրի հետ աշխատելու համար շատ արդյունավետ մեթոդ է:

Սովորողներին բաժանեցինք քարտեր, որոնց վրա գրված էին լեզվական գիտելիքին

	✓ Հաստատում է իմ իմացածը:	+ Նոր տեղեկատվություն է:
1. Գործողություն ցույց տվող բառերը կոչվում են **բայ**: 2. Բայերը պատասխանում են **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում** հարցերին: 3. Բայերին օգնող, օժանդակող բառերը (եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին) կոչվում են **օժանդակ բայեր**:		

վերաբերող սահմանումներ, ապա հանձնարարեցինք կարդալ և նշումներ կատարել թերթիկների վրա:

Քարտի նմուշ-օրինակը՝

Նշումներ կատարելուց հետո սովորողները բաժանվեցին երկու խմբի և միասին քննարկեցին գրված տեղեկատվությունը: Այնուհետև արդեն բարձրաձայն քննարկվեց սովորողների համար նոր տեղեկատվությունը, և ամրապնդման համար կիրառեցինք **«Խաթարված հերթականություն»** մեթոդական հնարը՝ շարունակելով ստեղծված խմբերով աշխատանքը, յուրաքանչյուր խմբին տրվեց ծրարներ, որոնց մեջ գրված էին նախադասություններ՝ բաժանված տարբեր մասերի, սակայն բացակայում էին օժանդակ բայերը: Աշակերտները վերականգնեցին բառերի խաթարված հերթականությունը և տեսան, որ նախադասություններում բացակայում են **էր** և **է** բառերը:

Հարուստը	շատ	ժլատ	:
Ժլատը	երկու	անգամ		վճարում:

Սովորողները եկան այն եզրահանգման, որ առանց այդ բառերի նախադասությունը լիարժեք չի լինում:

Օժանակ բայերի ուսումնասիրման նպատակով մեր կողմից «*Փոխներգործուն գրառումների համակարգ*» մեթոդի կիրառությունն արդյունավետ էր, քանի որ այն հնարավորություն ընձեռեց աշակերտներին կարդալու ընթացքում ուշադիր լինել, միանգամից ընկալել, թե տրված նյութի բովանդակությունը որքանով է իրենց ծանոթ,

և նշել իրենց համար նոր տեղեկատվությունը՝ փորձելով կարդալու ընթացքում այն ինքնուրույն հասկանալ:

1. 3. Ուսումնասիրման արդյունքների վերլուծություն և ընդհանրացում

Այսպիսով, ինչպես արդեն իմացանք, տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին

կիրառվում են տարբեր մեթոդներ ու մեթոդական հնարներ: Հետևաբար առաջին հերթին փորձեցինք պարզել, թե ներկայիս դպրոցներում ինչ եղանակներով է իրականացվում փոխներգործուն մեթոդների ուսումնասիրումը:

Այդ նպատակով՝ դիտումներ անցկացրինք Լեռնաձորի հիմնական դպրոցում,զրուցեցինք նաև հարակից դպրոցների տարբեր դասարանի դասվարների հետ և փորձեցինք պարզել, թե նրանք որքանով են կարևորում տարրական դասարաններում փոխներգործուն մեթոդներ ու հնարների կիրառումը :Հարցմանը մասակցեցին թվով 12 դասվարներ և ստացանք հետևյալ արդյունքները:

Տրամագիր 1.



Հարցմանը մասնակցած դասվարների 40%-ը կարևորում է փոխներգործուն մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, 36%-ը մասամբ է կարևորում, իսկ մնացած 24%-ը ընտրել է երրորդ պատասխանը, նշելով, որ տարրական դասարաններում փոխներգործուն մեթոդների ուսումնասիրումը պետք է

իրականացնել այնքանով, որքանով որ այն կնպաստի սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը:

Թեմաների ուսումնասիրման ավարտին պարզելու համար, թե ժամանակակից, փոխներգործուն հնարներով անցկացված դասերը որքանով են նպաստել աշակերտների կողմից լեզվական գիտելիքների յուրացմանը, կիրառեցինք անհատական թերթիկներով աշխատանք, որի առաջադրանքները վերաբերում էին գոյական, բայ, ածական թեմաներին: Գրավոր աշխատանքին մասնակցեց երրորդ դասարանի 12 աշակերտ:

Տրամագիր 2 .



Պարզ դարձավ, որ սովորողների 65%-ը գերազանց արդյունք էր ցույց տվել և անսխալ կատարել էր ինքնուրույն աշխատանքը, իսկ մյուս 35%-ի մոտ առկա էին որոշակի սխալներ, նշենք նաև, որ կատարված սխալները կրկնվում էին: 25%-ի մոտ առկա էին օժանդակ բայերի ճիշտ կիրառման սխալներ, որը մեր կարծիքով պայմանավորված է նյութի դժվար ընկալման պատճառով, իսկ մնացած 10%-ի մոտ առկա էին ավելի շատ անուշադրության սխալներ և ջնջումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այսպիսով, փոխներգործուն մեթոդները ապահովում են՝

- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում,
- Կրթական գործընթացին սովորողների ակտիվ ներգրավում,
- Ինքնուրույնության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում-խոսք, հիշողություն, մտածողություն,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

2. Փոխներգործուն մեթոդներն ստեղծում են ամեն անգամ գիտելիքն ինքնուրույն <<կառուցելու>> և նորը հայտնագործելու միջավայր.ի տարբերություն պասսիվորեն ձեռք բերած <<փոխանցված գիտելիքի>>,հետազոտության շնորհիվ ակտիվորեն կառուցված գիտելիքն առավել արդյունավետությամբ է ընկալվում և յուրացվում,երկար է պահպանվում հիշողության մեջ, ունենում է կիրառական նծանակություն և այս ամենը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աշոտ Տեր-Գրիգորյան <<Միջառարկայական կապերը տարրական դպրոցում>> Ե.1986թ:

2 .Ալեքսանյան Լ., Ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Եր.: Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն, 2004, 130 էջ:

3. Բալայան Ա., 200 խաղ, Եր.: «Զանգակ» հրատ., 2017, 117 էջ:

4. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ» հրատ., 2015, 315 էջ:

6. Գյուլամիրյան Ջ.Հ., Խաղալով սովորենք, Եր., «Զանգակ» հրատ., 2009, 80 էջ:

7. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը: 3-րդ դասարան, Եր.: «Զանգակ» հրատ., 2017, 512 էջ:

8.Даутова О. Б., Иваньшина Е. В., Ивашедкина О. А.Современные педагогические технологии, Каро, 2013–176 с.

9.Кошмина И. В. Межпредметные связи в начальной школе, Владос, 2003- 115с.

10.Максимова В. Н.Межпредметные связи и совершенствование процесса обучения, 1985– 199 с.

11.Малышева Т. В. Влияние методов интерактивного обучения на развитие коммуникативной компетенции учащихся // Учитель в школе. - 2010. - N 4. - С. 14-16.